ինձ յայտնել Ձեզ զշնորհակալիս վասն համակրութեանն, զոր արտայայտեալ էիք առ ՄԵԾ ԹԱԳԱՒՈՐՆ և վասն ցաւակցութեանն, որ դիպեցաւ Ռուսիոյ, նաև վասն շնորհաւորութեան և ցանկութեանցն, զորս յայտնեալ էիք ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ի դէպս ամբառնալոյ ՆՈՐԱ ի Գահ նախահարց իւրոց։

ԳԻՐՍ.

***

Ազգիս Սրբազնագոյն Կաթուղիկոսի տնօրէնութեամբ Ամսոյս 14-ին Ս. Էջմիածնի Տաճարի մէջ զկնի Ս. Պատարագի Ս. Էջմիածնի միաբանական ուխտը Հայ ժողովրդականաց խուռն բազմութեան ներկայութեամբ մաղթանք կատարեց ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ Գ. ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՉԻ Ռուսաց Կայսեր Գահակալութեան համար, իսկ նորա հետևեալ օրը (սոյն ամսոյ 15-ին) զկնի Ս. Պատարագի կատարեց Ռուսաց մեծ Կայսր հանգուցեալ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ թաղման առթիւ հոգեհանգիստ։

ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Փետրվարի 19-ին Մայր Աթոռումս ըստ սովորականին վայելուչ հանդիսով տօնեցաւ Ս. Վարդանանց տօնը։ Ս. պատարագից յետոյ միաբանական ուխտը հոգեհանգիստ կատարեց վասն հոգւոյ հանգուցեալ ծնողաց Վեհ. Հայրապետի Ազգիս։ Մայր Աթոռոյս միաբանական սեղանատանը ճաշի ժամանակ շնորհունակ Եփրեմ Սարկաւագը կարդաց տօնին պատշաճաւոր մի ընտիր ճառ, որի մէջ գեղեցիկ կերպով նկարագրեց հինգերորդ դարու Հայոց մտաւոր շարժումը։ Ս. Վարդանանց Ազգ.—կրօնական պատերազմի նպատակը և հետևանքը. աւելի գեղեցկապէս բացատրեց թէ՝ յառաջադէմ Գարեգնի անվեհեր նահատակութիւնը ինչ ոգևորիչ ազդեցութիւն ունեցաւ նախարարական խմբի վերայ։ Այս ճառին հետևեց Մայր Աթոռոյս Ծառնգ. դպրոցի աշակերտաց ներդաշնակ ազգային երգեցողութիւնը։ Իսկ ճեմարանի Սաները թէ հացի ժամանակ և թէ երեկոյեան պատեցին Ս. Քաջերի յիշատակը իւրեանց բերանացի և գրաւոր ատենախօսութիւններով, ներդաշնակ երգեցողութիւններով և ազգային թատրոնական ներկայացումներով, որոնցից մինն էր իւրեանց հեղինակած գիւղական կեանքից կատակերգութիւն «Կորցրած դանակ»։ Իսկ միւսը Պեշիկթաշի «Երեք քաջեր»։ որոց միշտ ներկայ էին լինում Գեր. Տեսուչը և Ցարգոյ ուսուցիչների խումբը։ Սոցա խօսեցած ու կարդացած ճառերը հետզհետէ կհրատարակեն Արարատի յառաջակայ տետրակներում։

***

Ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեցաւ Մայր Աթոռոյս վանական—տնտեսական Կառավարութեան Անդամ Գեր. Գրիգոր Եպիսկոպո-

սին և Բարեշ. Մամբրէ և Գարեգին Վարդապետներին վերահաստատել իրեանց պաշտօններում ներկայ 1881 թուականի համար։

***

Նորին Վեհափառութիւն Ազգիս Սրբազնագոյն Հայրապետը բարեհաճեցաւ Մայր Աթոռոյս Տպարանական Ժողովոյ Անդամ Բարեշ. Ղևոնդ և Յուսիկ Վարդապետներին և Եփրեմ Սարկաւագին վերահաստատել նոյն պաշտօնի մէջ ներկայ տարւոյս համար։

***

Յունվարի 30-ին Վաղարշապատում վախճանեցաւ համեստաբարոյ, աշխատասէր և բազմամեայ Դպիր Մելիտոս Յովբեան Վաղարշապատցին անմահացնելով իւր անունն ու բարի յիշատակը Վաղարշապատցւոց, հետևաբար և ազգիս ապագայ սերունդների սրտերում մի կտակաւանդութեամբ, որը կարժէ՝ որ նախանձելի դառնայ։ Բարեյիշատակ հանգուցեալը իւր կենդանութեան միջոցում օրինասահման եղանակով իւր բոլոր ունեցած սեպհական կալուածքը, որ է մի ձեռք տուն և մի այգի, կտակաւ աւանդել է Վաղարշապատու Հայոց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ անուան և տեսչութեանը, այն պայմանով, որ իւր յիշեալ կալուածքը վաճառուի, Նորանից գոյացած գումարից 300 ր. տրուի իւր կնոջը, բացի այն 300 բուբլուց, որը պարտական էր իւր կնոջը, և որ նոյնպէս այս գումարից պէտք է հանուի, և 300 բուբլի իւր քեռորդուն, իսկ յաւելեալ գումարը, որ կլինի ոչ պակաս քան 1000 ր. մեայ անձեռնմխելի և տրուի տոկոսաբերութեան, որից գոյացած տոկոսի քանակութեան համեմատ իւր անունով սաներ ուսանին Վաղարշապատու Հայոց հոգևոր երկսեռ դպրոցներում։ Եւ այսպէս սա, որ իւր կենդանութեան միջոցում չէր մխիթարւել մարմնական ժառանգներով, իւր խելացի բարեգործութեամբ մահից յետոյ պէտք է մխիթարի իւր հոգևոր սաներով։

Վեհափառ Հայրապետի հրամանաւ վայելուչ հանդէսով կատարուեցաւ հանգուցելոյ յուղարկաւորութիւնը. Ս. պատարագին ներկայ էին մի Եպիսկոպոս և մի քանի վարդապետներ. դագաղը շրջապատուած էր տեղւոյս երկսեռ դպրոցների աշակերտներով, նոցա հոգաբարձուներով և ուսուցիչներով. ժողովրդոց բազմութիւնը մեծ էր. Բարեշնորհ Յուսիկ վարդապետը ազդու և համառօտ քարոզութեամբ պատմեց նորա կեանքը և բացատրեց նորա կտակի բարի նպատակը և հետեւանքը։ տղայոց և օրիորդաց կողմից ևս կարդացուեցան դամբանականներ։

Ցանկալի էր, որ մեր հարուստ Ազգայինները ևս հետևելով այս բարեյիշատակ հանգուցելոյ օրինակին՝ իրեանց մեծագումար կտակաւանդութեան ժամանակ չմոռանային և Հայ Ազգային հաստատութիւնքը, երկսեռ դպրոցները, որոնք մեր ազգի յառաջադիմութեան միակ և անհրաժեշտ միջոցներն են։